Յաւուրս Յունիսի ոչ գայր նաւս ցորենոյ, եւ ոչ եւս պակասեցուցանէր զկշիռ հացին, վասն որոյ եւ ի տեղիս տեղիս սուղ գտանէր. որում սակի ելեալ դայ-մախամն ի զօլ՝ զբազում հացածախս գանեալ մինչ մահու հասուցեալ, և զոմն ի թի տվեալ և զմինն կա-խեալ. մինչչև մեռանել այնմ հասուցանէ արս զի զպարան կտրեսցէ ի կախաղանին, և յորժամ անկեալ կիսամեռ՝ յետ Զ և Է ժամուց մեռանէր։ Զումեմն գողոյ զձեռս հատին յաւուրս և զմինն կախեցին ի Պարմաղափու ասացեալ տեղին։ Մանկունք Բ մինն զմիւսն հարեալ դանակաւ և մեռաւ, և վճիռ արա-բեալ զի տարան զսպանողն ի մէջ բաղանեաց և պէր-պէռն ծակեալ զթեւն, զի հոսելով արեանն պակասէր կեանքն և մեռանէր։

Իսկ յաւուր տօնի Պէնտէկոստէի Ժ Յունիսի ա-ռաջին պահու երեկոյին անկաւ կրակ մերձ Տաւութ փաշայի ճամբոյ և վառեցաւ մինչ ի չորրորդում պա-հու գիշերոյն տունս Ի և Ի տամբ աւերեցաւ. վասն որոյ և գող մի կախեցին ի Պարմաղափուն և յԱղսա-բայն և ի Սուլտան Մէհէմէտ ճամին, զորոց ասէին կրակ ընկեցեալ, և զոմն ևս որ էր սպասաւոր ճա-մոյն վերոյ ասացելոյ և զարճիճն գողանայր հանա-պազ, զոր ի վերայ նորա ստուգեալ սպանին։

Յաւուրս գային ամենայն սպահք[1]) յԼիտրէնու, ոչ ունել պատերազմ, որ ասին թէ յետ օլօֆին պայրա-մի՝ յաւուր միում մինչ ի հասարակել աւուրն ԺԶՌ արս յաւել եհան ի քաղաքէն, զի մի անդէն նստեալ նեղասցին ի սովոյ, և զինքն ևս՝ զի անդ ևս սակա-ւանայր հացն յահագին յամարանս և յամենայն տե-զիս չթանայր երկիր ի ցօղոյ անձրևաց յլսկիզքն Ապ-

1) սփահիք.